

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ**

Զարգացման ենթակայ իւրաքանչիւր արարած իր հայրենիքն ունի: Բոյսերն ու կենդանիները իրենց բնիկ աշխարհն ունին, ուր աւելի ազատ կրնան աճիլ, քան մէկ ուրիշ տեղ: Հիւսիսային երկիրներու բոյսերը հարաւային երկիրներու մէջ աճիլ չեն կրնար, ինչպէս եւ Սառուցեալ ովկիանոսի թռչուններն ու կենդանիները ոգեսպառ կ'ըլլան Սահարայի ջերմադաշտերու մէջ: Աստուածային նախախնամութեան սահմանած օրէնքն է այս, որուն ենթակայ է նաեւ մարդը: Նոյնիսկ ամենահասարակ, կիսակիրթ ժողովուրդներն ունին հայրենիքի գաղափարը, որոնք հայրենիք ըսելով՝ կը հասկնան իրենց ապրելատարածքը, որը սակայն հայրենիք չէ:

Հողը հայրենիք կը դառնայ դարերու ընթացքին, երբ այն կը պատուի ժողովուրդի պատմամշակութային, ազգագրական, ճարտարապետական յուշարձաններով, նախնիքներու գերեզմաններով, երբ այն կը սրբագործուի թշնամիի դէմ մղած պատերազմներու յաղթանակներով եւ քաջարի հերոսներու թափած արիւնով, երբ կը ձեւաւորուին ազգային բնաւորութեան գիծերը, ազգային նկարագիրը, աւանդոյթները, բարքերը, լեզուական առանձնայատկութիւնները եւ ազգային ինքնագիտակցութիւնը, երբ այդ հողը ժողովուրդի պատմական յիշողութեան մէջ կը մտնէ ժողովրդական բանահիւսութեամբ, առասպելներով, էպոսներով, երգերով ու հէքիաթներով, կը հարազատանայ հոգեպէս, երբ ժողովուրդը կը դառնայ հոգեւոր ամբողջութիւն, երբ «Հող»-ը կը վերածուի «Տուն»-ի, իսկ «Տուն»-ը՝ «Երկիր»-ի ու «Հայրենիք»-ի եւ կը մտնէ ազգի արեան մէջ՝ որպէս անոր գոյատեւումի հիմնական պայման, որպէս հոգեւոր հայրենիք, որով ազգ մը կ'ապրի ոչ որպէս բոյս կամ կենդանի, այլ բանական եւ հոգեւոր արարած:

Քաղաքակիրթ կեանքով ապրող ազգերու համար հայրենիքէն զատ կայ նաեւ հոգեւոր հայրենիք մը, որու քաղաքակրթութիւնն ալ ունի իր հայրենիքը: Ամէն հողի վրայ նոյն գաղափարը աճիլ չի կրնար: Նոյնիսկ բարոյական եւ կրօնական ամենէն ընդհանուր գաղափարները տարբեր բնաւորութիւն եւ ձեւակերպում կը ստանան զանազան երկիրներու բնակիչներու մէջ: Հետեւաբար, քրիստոնէութիւնն ալ տարբեր բացատրութիւն եւ ձեւակերպում ստացած է այլ եւ այլ ազգերու մէջ, թէեւ արմատով նոյնն է ամէն տեղ: Դաւանաբանական եւ ծիսական կարգերու տարբերութիւնները եկեղեցիներու մէջ, ընդհանրական եկեղեցւոյ ազգային եկեղեցիներու բաժնուիլը Աստուծոյ տնօրինութեան եւ պատմական, բնական պարագաներու հետեւանք էին եւ ոչ այս կամ այն անձի կամայականութեան: Ընդհանուր առմամբ, տարբեր է արեւելքի քաղաքակրթութիւնը եւ տարբեր՝ արեւմուտքինը, տարբեր է քրիստոնեայ ազգերու ընդհանուր քաղաքակրթութիւնը եւ տարբեր՝ մահմետական եւ հեթանոս ազգերունը: Նոյնիսկ այս ընդհանուր խումբերու քաղաքակրթութիւններն ալ իրենց ճիւղաւորումներով կը զանազանուին իրարմէ: Ամէն ազգի հոգեւոր կեանք իր բնորոշ կողմերն ու յատկութիւններն ունի, որոնք պահել եւ զարգանալ կարող է իր բնիկ հողի վրայ:

Պատմութիւնը ազգերու կեանքի հայելին է, իսկ հայելիի մէջ կ'անդրադառնայ ճիշդ պատկերը: Հայ ժողովուրդի գիտակցական քաղաքակրթութիւնը կը սկսի քրիստոնէու-

Թեան հաստատումով եւ անոր դրոշմը կը կրէ իր զարգացման ամբողջ ընթացքին: Հայոց մատենագրութեան առաջին յիշատակարանը Ս. Գիրքի Թարգմանութիւնն է, որով կրթուած են եւ տակաւին կը շարունակեն կրթուիլ բազմաթիւ սերունդներ: Հայ մատենագիրներն ու վարժապետները միեւնոյն ատեն եկեղեցւոյ սպասաւորները եղած են: Հայոց ճարտարապետութեան, քանդակագործութեան, նկարչութեան մասին գաղափար կը ստանանք նախնեաց թողած վանքերու եւ եկեղեցիներու մնացորդներէն, խաչքարերէն, ելնդաւոր պատկերներէն, նկարչութեան հազուագիւտ նմոշներէն: Չմոռնանք յիշել հայ վանականներու ձեռքով ծաղկուած ձեռագիր աւետարաններու մասին, որոնց մէջ ընծիւղուած է մանրանկարչութեան արուեստը՝ իր անստգիւտ դրսեւորումներով, որոնք խանդաղատանքով կը պահուին ձեռագրատուններու եւ մատենադարաններու մէջ: Մանր արուեստներու՝ ասեղնագործութեան, ոսկերչութեան, փայտէ քանդակագործութեան եւ այլնի մասին եւս գաղափար կը կազմենք հին եկեղեցիներու եւ վանքերու մէջ պահուած զգեստներէն եւ զանազան իրերէն: Մեր նախնիքներու կրթարանները վանքերը եղած են իրենց վանականներով, ուր ուսում եւ դպրութիւն ստացած են ոչ միայն եկեղեցւոյ պաշտօնեաները, այլեւ արքայազուններ, իշխաններ եւ հասարակ ժողովուրդի որդիք: Վերջապէս վանքերը պահած են մեր նախնիքներու քաղաքակրթութեան մնացորդները՝ հնութիւններու եւ ձեռագիրներու ժողովածոներ, որոնց ուսումնասիրութեամբ՝ հնարաւոր է գաղափար կազմել մեր անցեալի կեանքի եւ պատմութեան մասին:

Այլ խօսքով՝ Հայ ժողովուրդի հոգեւոր հայրենիքը Հայաստանեայց Եկեղեցին է: Այս հայրենիքի վրայ միայն կարող ենք հոգեւորապէս աճիլ եւ զարգանալ, ինչպէս վերը յիշուած յատուկ բոյսերն ու կենդանիները իրենց հայրենիքին մէջ: Մեր անցեալն ուրանալ չենք կրնար, եթէ տգիտութեան եւ միակողմանի հասկացողութեան թանձր մառախուղը չէ նստած մեր հոգիի վրայ: Յառաջդիմութիւնը շղթաներու կապակցութիւն է. նոր օղակը պէտք է կապուի հին հետ եւ այսպէս շարունակուի անընդհատ: Ան, որ միշտ նոր կը սկսի, յաւիտեան սկզբնաւորութիւն կը մնայ: Նոր եւ ժամանակի պահանջներուն համեմատ քաղաքակրթութիւն ստեղծելուն համար պէտք է մեր նախնիքներու հոգիները մեզի գործակից ըլլան, հայոց հայրապետներու եւ վարդապետներու հատընտիր շարքերը, հայրենիքի անձնուէր նահատակները պէտք է յարութիւն առնին մեր հոգիի մէջ եւ խրախոյս հանդիսանան վերածնութեան, պայծառ եւ վսեմ քաղաքակրթական կեանքի մը նորոգման: Հայ կեանքի հետ կապուած գիտութիւնները՝ ազգային եւ եկեղեցական պատմութիւններն ու մատենագրութիւնները, հնախօսութիւնը հիմնուած են անցեալի ուսումնասիրութեան վրայ: Հայոց նոր արուեստն ու քաղաքակրթութիւնը կրնան բողբոջիլ եւ ազգային դրոշմ ու գոյն ստանալ միայն նախնեաց արուեստի եւ քաղաքակրթութեան ուսումնասիրութեամբ: Այստեղէն կը ծագէ ազգային այն բարձր գիտակցութիւնը, որ գոյութեան պահպանման եւ յառաջդիմութեան գրաւականն է: Մենք ըստ ամենայնի՝ հին կեանքով վերածնուիլ չենք կրնար, բայց հնի մէջ կան բարիքներ, որ իրենց կենդանի ներգործութիւնը պիտի ունենան եւ յաջորդ սերունդներու վրայ: Իսկ այս բոլորին մէջ մեր եկեղեցին ահռելի եւ անչափելի դեր կատարած է անցեալին եւ պէտք է կատարէ ապագային, եթէ գիտակցաբար անոր ուժերը չչլատենք, եթէ դպրոցական կրթական ծրագիրներէն չզտենք ու չմաքրենք «Հայ Եկեղեցւոյ պատմութիւն» առարկան, եթէ չայլափոխենք ու նոր՝ խեղաթիւրուած պատմութիւն մը չգրենք եւ անորմով չկերակրենք մատաղ սերունդի անօթի ուղեղները:

Եկեղեցին ուրիշ կարեւոր գործ մը եւս ունի կատարելու: Ինչպէս հին ատեն, առաւել եւս այժմ ան չի կրնար ամբողջ հոգեւոր կեանքի ամփոփումը ըլլալ, որովհետեւ մենք անոր հոգեւոր հայրենիք կ'անուանինք ոչ այն մտքով, որ անկէ դուրս կեանք եւ քաղաքակրթութիւն չկայ: Քաղաքակրթութիւնն ընդհանրապէս աւելի ընդարձակ գաղափար մըն է, քան կրօնական եւ եկեղեցական քաղաքակրթութիւնը: Պէտք է ըսել, որ աշխարհիկ եւ նիւթական քաղաքակրթութիւնները նոյնպէս բարիք են, որոնք կը նպաստեն որոշ չափով եւ հոգեւոր, բարձր քաղաքակրթութեան զարգացման: Նիւթական բարեկեցութիւնը որպէս արդիւնք նիւթական քաղաքակրթութեան անհրաժեշտ պայման է եւ հոգեւոր կեանքի զարգացման համար: Բայց նիւթական քաղաքակրթութիւնն ինքն ըստ ինքեան նպատակ լինիլ չի կրնար, անցաւորն ու երկրաւորը պէտք է ստորադրուի եւ պատուանդան դառնայ բարոյական եւ յաւիտենական գաղափարներու համար: Քաղաքակրթութեան նպատակը պէտք է ըլլայ ճշմարտութեան, բարութեան եւ գեղեցկութեան նոր աշխարհ մը ստեղծել բնութեան մէջ: Այսպէս հասկցուած քաղաքակրթութիւնն Աստուծոյ օրհնութիւն է եւ ամենասերտ կերպով կապուած մարդկային հոգիի կեդրոնական երակի՝ կրօնի հետ: Որովհետեւ բարձրագոյն կրօնի նպատակը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մարդոցմէ բարոյական անձնաւորութիւններ ստեղծել:

Քրիստոնէական կրօնը յատկապէս այս խնդրին մէջ բացառիկ դիրք կը բռնէ եւ կը կամենայ աղ ըլլալ կեանքի եւ քաղաքակրթութեան բոլոր երեւոյթները համեմելու համար: Առանց կրօնի եւ բարոյական կատարելութեան ձգտումի, ոչ միայն անտարբերութիւն կ'արթննայ դէպի ազնիւն ու վսեմը, դէպի առաքինին եւ մարդասիրականը, այլեւ քաղաքակրթութիւնը, գիտութիւնն ու արուեստը չարիք կը դառնան՝ եսական, մոլեգին եւ զազրելի նպատակներու միջոց: Կեանքը կը դառնայ դժոխք մը, որու համար գաղափար կրնան տալ հին ազգերու՝ յունաց, հռոմայեցիներու, հրէաներու կրօնական անկումի շրջանները: Եւ ահա այստեղ եկեղեցւոյ առջեւ կը բացուի գործունէութեան ընդարձակ եւ վսեմ ասպարէզ մը, ան կ'աշխատի, որ աւետարանի լոյսը թափանցէ կեանքի բոլոր երեւոյթներու, ի թիւս որոնց եւ աշխարհիկ ու նիւթական քաղաքակրթութեան մէջ, ազնիւ ու բարոյական նպատակներ կը դնէ անոնց առաջ: Ան միշտ կը շեշտէ եւ կ'աշխատի մարդոց մէջ հաստատել այն ճշմարտութիւնը, թէ հոգին առաւել է, քան մարմինը, թէ եսականը պէտք է համակերպուի ընդհանուր շահերուն, թէ աւելի բարձր բարիք կայ, քան սոսկ նիւթական բարեկեցութիւնը: Ան կ'աշխատի նաեւ ազնիւ քաղաքակրթութեան պտուղները մատչելի դարձնել ընդհանրութեան, որովհետեւ շա՛տ քիչերը հնարաւորութիւն ունին գիտական եւ գեղասիրական կրթութեամբ բարոյական անձնաւորութեան աստիճանին հասնիլ: Քրիստոնէական եկեղեցին կրօնական դաստիարակութիւն կը մատակարարէ իր հօտին, բարոյական սկզբունքները կեանքի հիմք կը դարձնէ, կը սրէ խիղճը ներքին ճշմարտութեան զգացումով, մարդկային հոգիի աչքերը երկրային աղտեղութիւններէն դէպի վսեմն ու երկնայինը կ'ուղղէ, կը մխիթարէ սգաւոր եւ թախծալից սիրտերը, յուսահատներուն յոյս կը ներշնչէ, բարոյապէս անկեալներուն ոտքի կը կանգնեցնէ, կը մեղմացնէ աղքատներու դառն վիճակը՝ կարեկից օգնութեամբ:

Եկեղեցին իր այսօրինակ հովուական-դաստիարակչական գործունէութեամբ բնականաբար կը ստեղծէ որոշ քաղաքակրթութիւն: Ան կը հիմնէ միջնակարգ եւ բարձրագոյն դպրոցներ, վարժարաններ իր կրօնական-բարոյական գաղափարները դեռափթիթ սերունդին մէջ ներշնչելու եւ պաշտօնեաներ պատրաստելու համար, ան կը ստեղծէ եկեղեցական գրականութիւն, գիտութիւն եւ սրբազան արուեստ իր ճիւղերով՝ ճարտարա-

պետութիւն, քանդակագործութիւն, սրբանկարչութիւն, երաժշտութիւն: Եկեղեցին սիրոյ գործունէութիւն կը զարգացնէ իր հօտին մէջ, ունեւորներու մէջ գթութեան եւ կարեկցանքի զգացմունք կ'արթնցնէ, չունեւորներուն օգնութիւն եւ նպաստ կը հասցնէ կարողութեան չափ: Կը հիմնէ անկեւանոցներ, հիւանդանոցներ եւ ուրիշ բազմատեսակ բարեգործական հաստատութիւններ: Կը հոգա իր հեռաւոր եւ աղքատ գաղութներու նիւթական եւ բարոյական վիճակին մասին եւ սերտ կը կապէ մայր եկեղեցւոյ եւ հայրենիքի հետ: Իր վարչական կազմակերպութեամբ ղեկավար կը հանդիսանայ ազգային-եկեղեցական կեանքի կանոնաւոր զարգացման, հոգեւոր եւ անձնուէր զինուորութիւն մը կը պատրաստէ՝ ծառայելու մեր ժողովուրդի կրօնական եւ քաղաքակրթական կեանքի յառաջդիմութեան: Վերջապէս ան պատուար կը կենայ օտար, հզօր հոսանքներու դէմ ազգային ինքնուրոյնութիւնը պահպանելու համար:

Այս բոլոր գաղափարներն ու հաստատութիւնները յատուկ են եկեղեցական կեանքին, միայն տարաբախտաբար այժմ մեր մէջ պատմական ձախորդ պայմաններու պատճառով աւելի նուազ չափով, քան ցանկալի էր: Մի՞թէ պէտք է նպաստենք կամ անտարբեր հանդիսատես լինինք, որ մեր հոգեւոր, սրբազան հայրենիքը իր քայքայումի գործողութեան մէջ յարատեւէ: Սիրոյ եւ երախտագիտութեան անձնուէր զգացումով իւղ չպիտի լեցնենք անոր 1700 եւ աւելի տարիներէն ի վեր մշտավառ կանթեղի մէջ, որպէսզի աւելի պայծառ լոյս տայ եւ իր հօտի ճշմարիտ, բարոյական վերածնութեան աղբիւրը դառնայ:

Ն. Վ.

